

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը**

**2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ
ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԵԽԻԱՅԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՉԱՅՆԱ-
ԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈ-
ՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 սեպտեմբերի 2010թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոյունյանի (նախագահող), Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովիանիսյանի
(զեկուցող), Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդ-
վածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ
հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի մայիսի
17-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ
Չեխիայի Նանրապետության կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին
համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետու-
թյան Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ»
գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 2010 թվականի
օգոստոսի 17-ին ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապե-
տության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ կառավարությանն առըն-
թեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Ա. Մա-

րությանի գրավոր բացատրությունը, հեղափոխությունը, համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

Նայասրանի Նանրապետության կառավարության եւ Չեխիայի Նանրապետության կառավարության միջեւ օդային տրանսպորտի մասին համաձայնագիրն ստորագրվել է 2010թ. մայիսի 17-ին՝ Երեւանում:

Համաձայնագրի նպատակը երկու պետությունների համապատասխան փարածքների միջեւ ու դրանցից դուրս օդային հաղորդակցությունները զարգացնելն է:

Պայմանավորվող կողմերն սրանձնել են հետևյալ իրավունքները եւ պարտականությունները. յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի նշանակելու ավիաընկերություն կամ ավիաընկերություններ՝ արվյալ Պայմանավորվող կողմի կողմից համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելու նպատակով, եւ հետվերցնելու ցանկացած ավիաընկերության նշանակումը կամ փոխարինելու նախկինում նշանակված ավիաընկերությունը մեկ այլ ավիաընկերությամբ: Նման նշանակումը կատարվում է դիվանագիտական ուղիներով՝ գրավոր ծանուցմամբ: Կողմերը միմյանց փրամադրում են համաձայնագրում սահմանված իրավունքները՝ համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի համապատասխան բաժնում սահմանված երթուղիներով նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցությունների հաստատման եւ շահագործման նպատակով:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի նշանակված ավիաընկերությունը կամ ավիաընկերությունները սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելիս օգտվում են, ի թիվս այլնի, հետևյալ իրավունքներից.

- մյուս Պայմանավորվող կողմի փարածքով անվայրէջք թռիչք կատարելու իրավունք,

- մյուս Պայմանավորվող կողմի փարածքում ոչ առեւտրային նպատակներով վայրէջքներ կատարելու իրավունք,

- մյուս Պայմանավորվող կողմի փարածքում՝ հավելվածում սահմանված կետերում առաջին Պայմանավորվող կողմի փարածքում գտնվող կետեր մեկնող կամ այդ կետերից ժամանող ուղևորներ, ուղեբեռ եւ բեռ, ներառյալ՝ փոստ, առանձին կամ համակցված ձեռով, օդանավ վերցնելու եւ իջեցնելու իրավունք եւ այլն:

Համաձայնագրով Նայասրանի Նանրապետությունը, ի թիվս այլնի, պարտավորվում է.

- ապահովել, որպեսզի ըստ համաձայնագրի նշանակման մասին ծանուցում ստացած ավիացիոն իշխանությունները, պահպանելով համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ պարբերությունների դրույթները, անհապաղ անհրաժեշտ շահագործման թույլտվություն տրամադրեն Չեխիայի Նանրապետության նշանակած ավիաընկերությանը,

- ապահովել, որպեսզի Չեխիայի Նանրապետության փարածք մուտք գործելիս, փարածքում գրնվելիս կամ փարածքից մեկնելիս օդանավերի շահագործմանը եւ օդագնացությանը վերաբերող՝ նրա փարածքում գործող օրենքները, կանոնակարգերը եւ ընթացակարգերը կատարվեն Նայասփանի Նանրապետության ավիաընկերությունների կողմից,

- իր մաքսային, միգրացիոն, համաճարակային եւ համանման կանոնակարգերը կիրարկելիս արտոնություն չտրամադրել համանման միջազգային օդային հաղորդակցությունների մեջ ներգրավված իր սեփական կամ ցանկացած այլ ավիաընկերության՝ մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերության նկատմամբ,

- պաշտպանել, միջազգային իրավունքից բխող իր իրավունքներին եւ պարտավորություններին համապատասխան, անօրինական միջամտություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը,

- Չեխիայի Նանրապետության կողմից հարցման դեպքում ցուցաբերել անհրաժեշտ օգնություն քաղաքացիական օդանավի անօրինական զավթման գործողությունները եւ այլ անօրինական գործողությունները կանխելու համար՝ ուղղված նման օդանավերի, դրանց ուղեւորների եւ անձնակազմի, օդանավակայանների ու օդագնացության միջոցների թռիչքային անվտանգության եւ քաղաքացիական ավիացիայի անվտանգությանն ուղղված որեւէ այլ սպառնալիքի դեմ,

- ապահովել, որ համարժեք միջոցներ ձեռնարկվեն իր փարածքում՝ օդանավը պաշտպանելու եւ ուղեւորների, նրանց ձեռքի իրերը զննելու եւ անձնակազմի, ուղեբեռի, բեռի ու օդանավի պահուստային մասի համապատասխան ստուգումներն իրականացնելու համար,

- դրական լուծում գտնել նաեւ բոլոր այն հարցումներին, որոնք ներկայացվել են մյուս Պայմանավորվող կողմի կողմից եւ վերաբերում են անվտանգության հիմնավորված միջոցների կիրառմանը՝ որոշակի սպառնալիք կանխելու համար,

- ազատել մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությանը ներմուծման սահմանափակումներից, մաքսատուրքերից, անուղղակի հարկերից, փեսչական գանձումներից եւ այլ ազգային եւ փրեդական փուրքերից եւ վճարումներից:

Նամաձայնագրով հանգամանալից նախատեսված են նաև ավիաընկերության նշանակման եւ շահագործման թույլտվության, շահագործման թույլտվությունը չեղյալ հայարարելու եւ կասեցնելու պայմաններն ու կարգը, թռիչքային պիլոտիության սերտիֆիկատների եւ լիցենզիաների ճանաչման կարգը, թռիչքային անվտանգության ապահովման կարգն ու պայմանները, մաքսային դրույթները, փուրքերը եւ հարկերը, օդանավակայանների եւ ավիացիոն միջոցների օգտագործման, ինչպես նաև փարանցման կարգն ու պայմանները եւ այլն:

Նամաձայնագիրն ունի հավելված, որը կազմում է համաձայնագրի անբաժանելի մասը: Նավելվածում նախատեսված են Նայասարանի Նանրապետության եւ Չեխիայի Նանրապետության նշանակված ավիաընկերության կամ ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիները:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի մայիսի 17-ին Երևանում ստորագրված՝ Նայասարանի Նանրապետության կառավարության եւ Չեխիայի Նանրապետության կառավարության միջև օդային փրանսպորտի մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՎՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ